



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ 1972

ԶՄԻՒՆՈՒՄ 17 ՅՈՒՆԻՍ 1972

ԹԻՒ 938

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Իտալիայ և Գերմանիայի օրագիրները հաճախում են արտի և եռանդուն սիրով կը հրատարակեն զսօնախմբութիւնները ու զսիրալի մեծարանքը, որք տեղի ունեցան 'ի Պէրլին 'ի պատիւ Իտալիոյ դաճաճառանդ իշխանին և իւր լծակցին Մարկարիթա իշխանուհւոյն, որոց այցելութիւնը անսարակոյս քաղաքային մեծ կարեւորութիւն ունի: Քանզի Գերմանիան կանոն կամ ուշ պիտի պարտաւորի Գաղղիոյ հետ զինուորական հաշիւ մի տեսնել: Հետեալքար Իտալիոյ բարոյական և նիւթական օգնութիւնէն կրնայ հարկաւորութիւն ունենալ: Իսկ Իտալիոյ միացեալ թագաւորութիւնը, որ ի ծոց իւր կը պահէ զանհաշտելի հակառակորդ իւր, Հոմմի Պապը կը սեմք, ոչ նուազ կարտութիւն ունի Գերմանիոյ հօգի պաշտպանութիւնէն ապագային մէջ, քանզի 'Եւրոյն Պրօքլամութիւնը չգաղարիք, ամեն տղիւ, 'ի բողոքելոյ ընդդէմ եղած լընչյաճ քաղաքական դէպքերուն Իտալիոյ մէջ, և Գաղղիոյ հասարակապետութիւնը' եթէ այժմ ձեռն օգնականութեան չը կարկառէր Հոմմի Քահանայապետին՝ պատճառը ուրիշ բան չէ, բայց միայն իւր արկարութիւնը: Բնիւ է որ իւր զինուորական զօրութիւնը կարգի դնելէ ետեւ, Պապին աշխարհական իշխանութիւնը վերականգնելու պիտի աշխատի:

Եւս քաղաքական փոխադարձ կարօտութիւնը, յորմէ ծագած է համակրական սերը և անկեղծ բարեկամութիւնը յիշեալ երկու մեծ տերութեանց մէջ, լաւ հասկցուած է թէ Գերմանիոյ և թէ Իտալիոյ ժողովրդէն, և անոր համար է որ յանապա կուրախանան վասն այցելութեան դաճաճառանդ իշխանին Իտալիոյ:

Պիտաբրի բերանը համարուած կաշի լինելու պէտք չկ'ընէր: 'Եւր օրագիրը կ'ապահովէր զԻտալիան բնիւրդ որ' 'Եւր լիւտանգ մի նորէն սպասուող իւր անխախտութեանը, Իտալիան պիտի գտնէ 'ի կայսերական կառավարութեան Գերմանիոյ, գաշնակից մի' որ զինուորեալ է, ոչ միայն յապահովութիւն իւր տանը, այլև պատրաստ է, եթէ հարկը պահանջէ, օգնութեան դիմել բարեկամաց և գրաւեաց, որք կը մտահաշիւ իւր բարեխախտած ջանքից և խնամոցը 'ի պահպանութիւն աշխարհիս իտալադուրութեանը:

Պէրլինի Պապը * Եւ Եւր յաղորդ աւելի յայտնի կերպիւ կը մանուցանէ Հիմմիթի իշխանին այցելութեան քաղաքական նպատակը, որ արդէն վերադարձած է 'ի Հոմմի:

Իտալիոյ դաճաճառանդ իշխանը և իւր լծակցը, մեզի համար յոյժ բարեհաճոյ հիւրեր են, կըսէ, վասնզի անոնց այցելութիւնը ոչ միայն կ'ապացուցանեն զբարեկամական կապակցութիւնները որով միտ որեւալ են Իտալիոյ և Բրուսիոյ արքունիքը, այլև քաղաքային իրաց այժման կացութեան մէջ այս տեսակցութիւնը կենցաղային տախան մեծ նշանակութիւն ունի: Ինչու որ Նոյն իսկ իտալական ազգն է որ կը ընդմէ՛ յանձին գաճաճառանդ իշխանին Բրուսիոյ, զեղբայրսիրական ձեռքը զոր Գերմանիան յօժարաւոր կերպով ընդմէ՛ միտաւորելու համար իւր բաղդը թեթեւակցուցնէ բաղդին հետ: Եւ այս բանին համար հարկաւոր չէ, կըսէ, բացայայտ գաշնակցութիւն մի, կամ յարձակողական և պաշտպանողական նիւթակցութիւն մի: Վասնզի Իտալիոյ և Գերմանիոյ նախախնամական կոչմանց նշանակութիւնը և հասարակաց թշնամի մի աւելի ապահովութեամբ կ'առաջնորդեն 'ի նպատակն այն, քան թէ կերպակցութեան եղած նիւթակցութիւն մի: Հիմմիթի իշխանին այցելութիւնը թէպէտև գաշնակցութիւն մի չնոստանար մեզ 'ի մէջ այս երկու տերութեանց, բայց հաւաստի կընէ զմեզ թէ Իտալիոյ մէջ շատ աղէկ հասկցած են թէ ուր են ազգին օգուտները: Եւստեան լերանց երկու կողմի բնակիչները քաջ կը գզգան թէ յայսմէն Գերմանիան և Իտալիան չեն կրնար իւրարմէ զատուիլ, քանզի իրարու հարկաւոր են:

Գաղղիոյ ազգային խորհրդանշանն մէջ սրբաժի որ աշխոյժ և յարասե եղան նախաշաղկ վիճաբանութիւնները 'ի մասին նոր կարգաւորութեան զօրաբանակին, նոյնչափ զժկամակութեամբ որոշուեցան հետեալ յօդուածները:

1. Իւրաքանչիւր գաղղիացի պարտաւոր է անձամբ մանել 'ի զինուորական ծառայութիւն:

2. Գաղղիական զօրաբանակին մէջ յաղթութեան կամ ուրիշ տեսակ բրաբրութեան, այսինքն վարձատրութիւններ չկան:

3. Իւրաքանչիւր գաղղիացի որ անյարմար չէ զինուորական ծառայութեան, կրնայ կոչուիլ 'ի ծառայութիւն: 20 տարեկանէ մինչև 'ի 40 տարեկան, ըստ օրինաց զործոն զօրաբանակին, թէև ինքն պահեստի զօրաբանակին վերաբերի:

4. Զինուորական անձնական փոխանակութիւնը չընթան է յայսմէն:

5. Գործոն (աբիթի) զինուորական չեն կրնար որդէ քուէարկութեան մասնակցիլ:

Գաղղիական հասարակապետութեան նախագահը, որուն կուրծքը մեծ խաչի բու 18 շքանշաններով արդէն զարդարուած է, 'ի մտ աւուրս ընկալաւ նաև զմեծ շքանշանը 'Եւրոպի բարձրագոյն Պէրլին' հանդերձ փաշայի տիտղոսով: Փարիզ լըպիրք փութացին իրենց խնդակցութիւնը յայտնելու վսեմաթիւր փաշային վասն այս արտաքոյ կարգի պատուին:

Ըստրիոյ կայսրն, որոյ բարեկամական յարաբերութիւնքն ընդ Ռուսաց կառավարութեան՝ սիրալիք չեն, և ցարը քաղաքական համաձայնութիւն մի չը կալահաստատել զանազան ազգայնութեանց հետ յորոց բաղկացեալ է իւր տերութիւնը, Ըստրիոյ կայսրն, կըսեմք, յսկիզբն առաջիկայ Ապրիլմիսը ամսոյն 'ի Պէրլին պիտի երթայ, կըսուի, յայցելութիւն օգոստոսիս կայսր Գերմանիոյ: Ըստ ուղեորութեան պատճառը 'ի վերին երեսս, ուրիշ բան չէ բայց միայն հորալիւ զ'Եւրոպի կայսերական Վիհափառութիւնն, որ ներկայ գտնուի Վիենայի մօտաւոր արուեստահայրիսին: Ստիպն լիւտալ Եւրոպի օրագիրը յիշեալ ճանապարհորդութեան մէջ սկզբնաւորութիւն մի կը տեսնէ գաշնակցութեան 'ի մէջ Բրուսիոյ, Ըստրիոյ, Իտալիոյ և Թուրքիոյ, 'ի դիպուածի որ Բրեքելան խնդիրը յերևան ելէ:

Պպանիոյ մէջ համազգային պատերազմը գժբաղդաբար կը շարունակուի, 'ի պատճառս սաստիկ երկպառակութեան որ կը տիրէ, և զիտես թէ բնական յատկութիւն մի եղած է Պպանիացոց, Վիհափառ Վիտէ թագաւորը՝ խորհրդակցութեամբ իւր նորընտիր պաշտօնէից ժողովոյն, պիտի գաղթեցնէ կըսեն, զոնէ առժամանակեայ կերպիւ, զսահմանադրական ազատութիւններն, որպէսզի կարող լինի տեղափոխական այսինքն ինքնիշխան կառավարութեամբ կատարելագէտ վախճան տալ ապստամբական շարժմանը, որ կը շարունակուի, թէև տկար յոյժ միջոցներով: Ըստ այսմ ազգային խորհրդանշանն իրարմէն գաղթած են բարձրագոյն հրամանաւ:

ԱԶԳԱՅԻՆ

ՊԵՏՈՒՆ

Հայրապետական կոնգրակին, զոր ամենայն Հայոց վեհա. կաթողիկոսն սուրբ Եջմիածնի՝ յուզարկած է առ ամենապատիւ Պատրիարքն Վ. Պօլսոյ, և որուն վրայոք յիշատակութիւն ըրած ենք մեր նախնիաց թուոյն մէջ:

ԳԵՐՈՐԳ. ծառայ Գրիգորի և անհատանի կոմսերն Աստուծոյ կախկոպութեամբ և կաթողիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարք համազգական նախաձեռն

ծար աթոռոյ Սրարատեան Սաքեբական մայր Եկեղեցւոյ կաթողիկէ Եջմիածնի, զերապատիւ Պատրիարքի Հայոց Վ. Պօլսոյ՝ Մկրտիչ արքեպիսկոպոսի խնդալ 'ի Տէր:

Անոգան ուրեմն ընկալեալ զնամակն թուագրեալ 'ի 40 Մարտ ամսոյ, ստորագրութեամբ Ձեր և Մեծապետի տիւ անդառնոյ Բաղաբական ժողովոյ իրեն 'ի պատանխանի մեքում հեռագրի՝ ընթերցաբ մեծաւ զարմացմամբ զի հարուածեալ զհնաւանդ և զնուրագործեալ իրաւունս մայր Սթոնոյ և Կոզմի, և մանաւանդ խնդիւ ծարտարութեամբ յեղաշրջեալ յոյլ լին կերպարան զխաւթութիւն անցից խնդրոյն Սոյ, և Զանայիք ցուցանել օգտուելու՝ և նշան միտութեան և արհողութեան ազգի Սոյն օրինակ սխալ և հակառակ կանոնաց Եկեղեցւոյ մերձ երկակայութիւն սրարարաբարանին Պօլսոյ առաջինն է զոր լեւծք և տեսանեմք, այո՛ և առաջինն համարեցի յազգ մեր:

Չմեր յերկրայն զի և խնդ՝ ձեր ունի վկայել, եթէ զերապատութիւն ձեր և Ս. Եպիսկոպոսներ որ յԵջմիածնի, յայտնապէս ժառանգութեամբ իւրեանց և երգմանց որ անաշի աշտարակն Աստուծոյ, մեղանչեցին մեծապէս: Իսկ վարդապետք և քահանայք և աշխարհական անգամք Երեսփոխանական ժողովոյ, որք զործակցեց եղեն ձեզ, ներողամտութեան են արժանի, զի ոչ գիտէին խախտել զարարողութիւն ուխտի և զձե երգման կախկոպոսաց 'ի ձեռնադրութեանն: Բայց քաջ գիտեն կախկոպոսներ, զոր ուխտեն և երկունն նախ 'ի ժողովի կախկոպոսաց 'ի Սինոդի առաջի սրբոյ Թաւրի և Աւետարանի, և ապա 'ի ժամու կոչման յառաձան եպիսկոպոսութեան, մինչ զգնտաւորեալ և 'ի ձեռնադրութեան կան 'ի վերայ ստալ՝ ճանաչող սկզբնոյ սրբոյն Վտեմիանոսի: Թողում ասել զբանն զոր սրատաւօք խօսեցաք Ձեզ և ամենից կախկոպոսաց ձեռնադրեցոյ 'ի մեջ 'ի Ս. Պատարարի յառաջ բան զհաղորդելն զՁեզ 'ի կենարար մարմնոյ և յարենն հեռան վասն նախանձախնդիր լինելոյ անխախտ սրահարմութեան կանոնաց Եկեղեցւոյ մերոյ և օգտի տարարող ազգիս, որ և ընկալայք յօժարակամ և խօտաւորք կատարել անթերի զամենայն աւուրս կենաց ձերոց: Եթէ հանձարեղ ամենք եւ զին առաջի աշտոյ ձերոց զօգուտ ինչ սրայիս վասն աղգի և եկեղեցւոյ, որ նոր էր և ընդդէմ հնաւանդ սովորութեանց Եկեղեցւոյս, սրարտ և արժան իսկ էր Ձեզ յայտնել նախ մայր Սթոնոյ ըստ անխախտ կանոնաց եկեղեցւոյ մերոյ և ըստ Վահանապետութեան տեղեւոյն՝ և խորհրդակցել ընդ մեզ, և քանզի հեղինակ ուխտին այնուրիւ և երգմանն մեր ինքնին չէաք զի յանձնապատան և ջնջելոյ ունեւոր զիրար աւան, վասնորոյ հարկ լինէր մեզ յայնմ ամ կազմել ժողով եկեղեցական յամենայն կողմանց և խորհիլ և զարման և զօգտակարազոյնն տեսնելն միարան հաւանութեամբ:

Ահա զայս կամեցաք ծանուցանել Ձեզ հեռագրով: Այսինքն չձեռնամխել յանձնապատան 'ի զործս և 'ի խնդիրն անոր քան զիրաւարութիւն Ձեր, չխտարիլ 'ի շաղկապ սրբոյ նախնի հարց, և եթէ իյէ հարկ սրայիւրական ստահմանել զնոր ինչ, եկեղեցական ժողովոյ միայն է անկ կազմեցելոյ ընդ նախադասութեամբ ընդհանրական Հայրապետի ամենայն Հայոց: Բայց սովորս բանք նախնի ձերոյ զլիտմին զմիտ հեռագրի մերոյ այլայլէին, իրր ընկալեալ արդէն մեր և Եկեղեցւոյն Հայաստանեայց զապօրինի զործաղութիւնն ժողովոյ, վասն տարազայի և եթ զդու շացուցանեալ: Մի այլպէս թուեցի ձեզ զիրեն լիք, այլ 'ի ընդ մեր, զի 'ի միարան կախկոպոսաց սրբոյ Եջմիածնի ընտրելիք պատարաւին վասն Սոյ, փութացաք հեռագրել և հրաւիրել զձեզ 'ի զգուշութիւն, զի խորհրդին 'ի ձեռն զոր կամիք 'ի զոր զնե՛ր նա 'ի վերէ քան զձեռնադասութիւն ձեր և վերապահեալ միայն ընդհանուր ժողովոյ: Բայց կարծել կամիք թէ մտադր լեալ իյեմք կազմել զժողով վասն յարաբերութեանց, որ և ցանկաց իմանալ թէ ո՛ր ունիցի լինել զուսմարտի միջոցն և սրայիս եղանակաւ, մեր չկարծեմք երբեք զի Երեսփոխանական ժողովն Պօլսոյ մոտացեալ զապարտիս

քրտոնեական, անդող լիցի մինչև խաղաղ օրինաւոր առաջարկութեան հայրապետ իւրոյ և յամուտեացի ի կարծիս սխալանաց իւրոյ, զի յաւանայս պարտաւորեացուք կազմել զայն ժողով մեծ՝ նախ քան զամենայն վտանգս զանցս և զհակառակորդս Եկեղեցւոյ զատել: Արդ զուրմէն մեր հայրական չնրէ մեզ յողուած առ յողուած պատասխանել ըսնից նամակի ձերոյ առ ի սչ վերապետեալ զսիրտս հոգեւոր որդւոցդ, և աւելորդ համարիմք հարցանել եթէ ուստի՞ ուսացք թէ ուխտեալ իցէ մեր յեկեղեցին Բերայ, կամ՝ տեղեակ զործողութեանց 66 ամի ժողովոյն Պատրիարքարանի, և կամ անիոյթ զարբազրութենէն Պալատ Զնիոյ եայն:

Բողոքէիք ի նամակի ձերում ընդդէմ դաւ և խաղաղաւորեանք բառից, բայց յաղաղս սխալանաց և յանցուածոց յայտնի զործեցից, յամենայն զօրութենէ և յամենայն անձնէ բողոքումն հարգարարացեանց զորք: Արդարեւ զժողովին է մեզ հաւատալ, զի Պալատ Զնիոյ սր ընդ Զեղ, յաղաղս վնաս ինչ հասուցանելոյ Եկեղեցւոյ մերում և ազգի գործեալ իցէ, այլ անտարակոյն եմք զի ի գործողութեանդ այլմիկ գոն դաւ և խաղաղաւորեանք օտարի, աղետաբեր ձեռն օտարի նշմարի այլք, զի սչ երբէք կարծեմք եթէ Հայն վառթարացի այնչափ, մինչ զի և յանձն առնուցու վնասել Եկեղեցւոյ իւրոյ և կրօնի ի կործանել զվստիլն զազգ իւր յապագային. սակայն ի դարաւոր ժամանակաց հետէ վտարանդի ի Հայրենեաց լինեն մերազնեաց և ողորմելի տղիտութիւնն՝ արար զՀայն խաղաղիկ ի յաջողակ ձեռս օտարաց. այո՛, դաւ նախկին մորմոքմամբ սրտի ասեմք, ո՛չ միայն յաւուրս մեր, այլև ի վաղնջուց սնտոի խոտմուռնք և փաղաքշտնք նենդամութ օտարաց յաճախ պատրեցին զմիտս մերայնոց և յաջողեցան բառնալ ի մէջ զխաղաղութիւն և զանդորութիւն, զրկեցին զՀայն, ո՛չ զեղիկի Հայն ի քաղցրիկ հայրենեաց, յինքնուրոյն ազատութենէ ի հարստութեանց և յայլոց բարութեանց և յԱստուածային պարգեաց զորս պատմութիւնն բացայայտ վկայէ, թէ և զբժբաղդարար ի ձեռն մերազնեաց ունայ յառաջադրաց:

Յորչափ զօրն միտք մեր, յօրէ լինելոյ մերոյ յողաղայն գործս և ի պաշտամունս իւր ի քառասուն և չորից ամաց հետէ քանիցս յողաղայնոց ոմանք ունայն յուսով և միամտաբար կալան դիտաբերայ ձեռաց օտարաց, և ջանային զփոփոխութիւնս ինչ մեծանել յողաղայն և յեկեղեցական իրս, զողոցս նշմարելով յայնս փրկութիւն ազգիս, յորս կայր ատառնեալ արդէն կորուստ ազգութեան, այլ ողորմութեամբ բարձրելոյն Աստուծոյ փութիմն վնասու տուժմամբ վերծաւ լլուծիւն ազգիս:

Եւ ահա ի քանի ամաց հետէ դարձեալ տեսնի ձեռն օտարին ի մերայնս. դաւ և խաղաղաւորեանք օտարութեան խռովէ զխաղաղութիւն Եկեղեցւոյ մերոյ, յաջողեալ է նա զբաւել զարս ոմանս խոտմանալով դռնայն և զերեակայական բարիս յողուա Հայ ազգութեան: Եթէ այս նկատմունք մեր հանգիստեցին ի կողմանէ ձերմէ ընդդիմութեան և ասալիք թէ չեք ի մեզ ձեռն օտարի, զժողովին է մեզ հաւատալ. զի եթէ ոչ զոյ չարժող ձեռն արտարնոց, զիսրդ ապա ո՛չ իմանամք զիրս և զգիտաւորութիւն և զբանս միմեանց. մեք բաղձամք ի սրտէ օր քան զօր պայծառութեան և յառաջագնաց զայնման ազգիս Հայոց. զնոյն բաղձայք անշուշտ և զուր՝ մեք կամիմք պահել և յարգել զաւանդութիւնս Եկեղեցւոյ և զկրօննս Ս. Հարց, ուղղախոս հաւատս մեր և զկրօնն և չկորուսանել զնախնի շուք և զիրաւունս մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի յաղատութիւն և ի փրկութիւն միլիոնաւոր ժողովուրդեան. զնոյն և զուր կամիլ խոտմութեանք. ուրեմն անտարակոյս պարտ էր համաձայնութիւն ի միջի մերում լինել և համամտութիւն. զի՞նչ իւրեան ապա հակադրելք բանք տարածայնութեանց, զի՞նչ իցէ զործելն ի թաքստեան և զաղտ ի մայր Աթոռոյ, զի՞նչ հակառակութիւնք, ուխտադրութիւնք, եկեղեցւոյ վարդապետութեանց հակառակ բանք և զըրուածք եայն. և զի՞նչ նշանակութիւն ունել մարթ է յար փոփոխութեանց խնամոյց ի կարգս խնդրոյ վասն կնճառից խնդրոյն ի դիւանի ընդհանուր ժողովոյ և հուսի ուրեմն «կաթողիկոսական և պատրիարքական յարաբերութիւնք» զորոյ չիմանամք տակալին զպաղտնիս. ուրեմն անշուշտ մին ի նախնի օտարական ձեռաց և կամ նոր ոմն օտարամիտ տայ զործել ձեզ յանձնապատան ընդդէմ իրաւանց մայր Աթոռոյ և Եկեղեցւոյ յողովով միշտ զնորօրինակ խնդիրս զի բաժանելով զամբողջութիւն եկեղեցւոյ մերոյ տակաւ առ առկաւ, ազատ գործեաց զոր կամի ի վնաս ազգութեան Հայոց: Յայտ իսկ է զի ձեռն օտար ո՛չ զբռնէ երբէք վնասել ազգի մերում յորչափ ազատ է ազգ մեր յանձնականական զրկից և խռովութեանց և յերկարատեւութեանց, քանի չէ

զանխաղ յոտոխոյ Եկեղեցւոյ մերոյ՝ բնաւորութիւն ազգիս, վասնորոյ ջանան միշտ կաղ և կոխ յարուցանել ի Հայոց, և թէ չնամիս զործել միմեանց և ի ձեռն Հայազգւոյն վնասել և ի գործնս կործանման հասուցանել զՀայոցն, որպէս մինչև յարդ եղեալքն քաջայայտ են բաղմաց և մեղ: Աստի հայրական սկսուհ պարտաւորութեամբ ասեմք, ազգայինք մեր փոխանակ զայս իւրեանց առ օտարս և առ արդարօնս դնելոյ, բարեւոր առնեն եթէ զիցեն զայս իւրեանց նախ յԱստուած և ապա ի սիրտ միաբանութեան հայազգի եղբայր համակրօնից, զի գտցեն զօգուտ, զգործութիւն և զյառաջագիտութիւն ազգի և Եկեղեցւոյ մերոյ: Սիրելիք, նախապէս գիտել արժան է հաւատաւոր և ի վերայ հասանել մտաց և ճանաչել և իմանալ զսիրտ և զմիտս և զգիտաւորութիւն միմեանց, և մի ընդունայն ի խաւարի մարտնչելով վերաբերել զհամարիւն եղբարս ի կործանումն Եկեղեցւոյ և ազգի, և մի ընդունայն ջանալ ի պատրել զմիմեանս անօգուտ փաստարանութեամբ, և մի սքողել զսխալանութեան անխաղ երեւելոյ: Օգտուէտ յոյժ համարիմք մեք վասն ազգի և եկեղեցւոյ ի մտաւոր տեսանել զմիմեանս և խօսիլ, որպէսզի յետս ընկրկեցին բողոքովն վնասակար ձեռք օտարաց: Եթէ ներկին մեզ ժամանակն և հանգամանք իրաց, ո՛չ անագանէք անձամբ գալ այլք փոխանակ կոնգակիս այսորիկ, և բերան առ բերան խօսիլ զօգուտն ազգի մերոյ սիրելոյ և Ս. Եկեղեցւոյ. քանզի վասնզ մեծ և ահագին երևի վասն ապագայի ազգիս. և զի ո՛չ ներեն մեզ այժմիկ հանգամանք ժամանակիս և բաղմոյցոյ և բաղմովիլ զարդունք մեր գալ ի մայրաքաղաք, և որպէս քաջայայտ է ո՛չ փաստաբանութեամբ և եթ բոժի այս ախտ մահաւոր, այլ առաւել ևս զպարանոց, և կիրք անձնականք ևս քան զիստանկեալ բարձրանան և կուռովք և երկարատեւութեամբ մերայնոց՝ օգուտ ազգի և եկեղեցւոյ զիւրազնոյ վաճառի օտարաց և ապաւան անագան ոչինչ երբէք օգտի:

Աստի պատշաճ վարկանիմք կարելին փութով ի զիրկս Մօրն եկեղեցւոյ Հայոց ի Ս. Էջմիածնի առաքել զերկուս ոմանս այտի. զմին բարձրաստիճան եկեղեցական և զմիւսն աշխարհական ի կողմանէ ազգային և բնափոխանական ժողովոյ Պօլսոյ, որպէսզի պարզեցին միտք և զաղափարք յերկուսեանք, և որ ինչ կարեւոր են ի զիրկն և ի գործել վասն ազգի և եկեղեցւոյ խորհանցութեք, որով յաջողի մարթնայոյք խափան դնել մօտալուտ չարեաց և ապաւան վտանգին:

Ահաւասիկ կատարելով զպարտիս մեր, սոքին Հայրապետական Արքեպիսկոպոս և Հայրական հոգեւանդն սիրով հրաւիրեմք զերկուս անձինս ընտիրս ի մէջ ի խորհրդակցութիւն, և կամիմք յուսով զի ոգւով քրիստոնէութեան և խաղաղասիրութեան լուիլիք հայրապետական ձայնի, որոյ իսկական նպատակ հայի միայն և միմիայն յողուա ընդհանրութեան ազգի և յառաջագիտութեան և պայծառութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ: Աւերող համարիմք յաւելուլ աստանօր, զի պատգամաւորքն ձեր լինելին արք խաղաղասէրք և ճշմարիտ ազգասէրք, և ըստ կարեւորն հնաւուսեք և խոհանք: Եկեղեցականն եղիցի հուստ Եկեղեցւոյ կարգաց և օրինաց, կենցաղագէտ, և որպէս կուսակրօն անձնուրայ առաւել սիրող Ազգի և Եկեղեցւոյ քան անձին:

Արդ լիայոյս եմք, զի զկոնգակ մեր զայս առանց յապաղելոյ ընկրկեալ յատենի Երեսփոխանական ժողովոյն, և ընկրկեալ որդիական ջերմեանդն սիրով զազգ օգուտ առաջադրութիւն մեր վաթմասիք ընտրել զերկուս արժանաւոր անձինս և առաքել ի մայր Աթոռս:

Ողջ լեւուք և օրհնեալք յԱստուծոյ և ի մէջ:
(Ստորագրութիւն)

Յամի Տեառն մերոյ 1872 Ս. արիւլ 28,
և յազգային թուականութեան ՌՅԻԱ
Ի Սուրբ Էջմիածին:

ԲԱՆԻ ՄԻ ԽՕՍԲ

Ի պաշտպանութիւն ազգային պատուոյն Զմիւռնիոյ:

Արեւելեան Մասիւն Հանդիսին Մայիս ամսատետրին մէջ, Հաջորդ կեղծ ստորագրութեամբ իւր մէկ թղթակցին նամակը կարգացինք. որ կըմտազգէ նախ՝ շարադրեալ Արշակունի, ինչու որ Յունաց ազգին համար մեր մեծ եղբայրները ըսեք է: Երկրորդ կըմտազգէ Զմիւռնիոյ Հայ ժողովուրդը, վասնզի կըմտազգէ երեսփոխան յուղարկել յազգային ընդհանուր ժողովն Ս. Պօլսոյ, զոր եթէ չուզեր ճանաչել կըսէ, ինչու որ երեսփոխան անոր ընտրած կաթողիկոսն ու պատրիարքները: Երրորդ՝ կըմտազգա թէ մամիլոյ բացարձակ ազատութիւն ու անպատ

ժողովին չկայ, յաւելցնելով թէ հրապարակական թերթի մը համը հոտը ազատ շուշն է զոր չուշն, կըսէ, մեր ազգային լրագիրք. թէ Օմիւռնիոյ զարմանալի քաղաք մըն է, ինչու որ լոյս, ազատութիւն, ազգային պատուոյ նախանձախնդրութիւնը ուրիշ չտար, և մերթ ընդ մերթ ազատութեան, բունութեան կրօնամոլութեան գործեր կըկատարէ:

Այս անհիմն մեղադրանաց կարելի եղածին չափ համառօտիւ պատասխանելով, կուզեմք մեր քաղաքակց Հայուն պատիւը պաշտպանել իրեն ազգային լրագիր Օմիւռնիոյ. և զայս ընելով՝ կարծեմք թէ հայրենասիրական պարտք մի կատարած կըլինիմք:

Նախ կըսեմք թէ՝ Հայն երբ մեր մեծ եղբայրները անուանելով՝ սխալած չեմք, այլ սխալման հին սովորութեան և Երեսփոխանի պատուիրանացը հետեւելով՝ տուած եմք անոնց այս եղբայրսիրական առնունք. որ այսօրուան օրս ալ կըլըրծածուի նոյն իսկ Ս. Պօլսոյ Հայոց մէջ: Ուրեմն իզմիրի մէջ, ուր Յոյները աստիպատիկ աւելին են ի Հայոց, և միանգամայն զօրաւոր և հարուստ, միթէ կրնայինք մեր կրտսեր եղբայրները անուանել զանոնք. և միթէ Արշակունի յանցանք գործած է սէր և միութիւն քաղաքելով և յոռի կրից ճարակ չտալով յողուա Հայ ժողովուրդեան քաղաքիս:

Բայց դուցէ զրուցող դտնուի, թէ Հայն երբ զմեզ հերետիկոս կըհամարեն, դուք ի՞նչպէս զանոնք եղբայր կանուանէք: Կըպատասխանեմք թէ Հայ կաթողիկոսն ևս զմեզ հերետիկոս կամ հերձուած կըլի. չենք ի՞նչպէս, ուրեմն ազգային բոլոր լրագիրք մեր համազգի եղբայրը կըսեն անոնց համար: Արդ՝ ինչ ըստ կըբռնեմք որ եղբայր կըլիւնեմք զհայ կաթողիկոսները, նոյն սկզբունքով մեր եղբայրը կրնամք անուանել և զՀայն երբ:

Երկրորդ՝ եթէ Օմիւռնիոյ Հայ ժողովուրդը կը վարանի երեսփոխան յուղարկել Ս. Պօլսոյ ընդհանուր ժողովոյն մէջ, ըստ մեզ պատճառն այն է որ յիշեալ ժողովն մտաւանդ ի մասին ընդհանրութեան՝ օրինաւորապէս կաղմաւ չէ, անոր անդամներէն շատերը ինչպէս Ս. Պօլսոյ ազգային լրագիրք ևս վկայեցին, 5, 10 կամ 12 քուէլուք միայն ընտրուած են ընդդէմ անօրէնութեանց Սահմանադրութեան, և զաւառական Հայոց թիւը տասնապատիկ աւելին լինելով հանդերձ, նոյն ժողովոյն անդամոց մեծագոյն մասը՝ Պօլսեցի երեսփոխաններէ բաղկացեալ է. հետեւաբար զաւառական Հայոց ազգային իրաւանց բնութիւն եղած է և կըլինի(1): Այս պատճառաւ երեսփոխան չյուղարկելով, Խզմիրի Հայ ժողովուրդը իւր ազգային պատուոյն նախանձախնդիր եղած կըլլայ:

Սահմանադրութիւնն ևս օրինաւոր չկրնար համարուիլ զաւառականաց համար. վասնզի անոնց խորհրդակցութեամբը շարադրուած չէ և անոր վերաքննութիւնն անգամ առանց զաւառական Հայոց մասնակցութեանը կըլինի: Բայց ինչու խօսքերնիս երկարենք. միթէ նոյն իսկ խօսքեան Ս. Պատրիարքը անգործազրկել չհամարեց զսահմանադրութիւնը՝ չու

(1) Արքապետ Բիւրեղ Եւ ճշմարիտ ազատասիրութիւնը կըպահանջեն որ ամեն տեղ, այսինքն քէ ի Ս. Պօլիս Եւ քէ Գաւառաց մէջ, ըստ բուայ տանց հաւասարապէս որոշուի ընտրելի տեղական երեսփոխանաց քիւր Եւ յետոյ ըստ բուայ այս երեսփոխանաց քիւր միայն կրնայ օրինաւորապէս կազմուիլ ազգային ընդհանրական խորհրդանոցը ի Ս. Պօլիս, Եւ այս խորհրդանոցը միայն ձեռնադրուա է ազգային ընդհանուր գործերը կարգադրել: Իսկ մայրաքաղաքին երեսփոխանաց նիմակուան կեդրոնական ժողովը՝ իւր տեղական խնդիրները Եւ ազգային մասնաւոր գործերը միայն կարգադրելու ձեռնադրութիւն ունի ըստ իրաւանց: Բայց այժմ տիւրիւնը ըրած բաժնիկն պէս եղած է. բանգի Ս. Պօլիս ուր հագին քէ 400 հազար Հայ ժողովուրդ կըգտնուի բաց ի պակնիտոց, 80 պատգամաւոր ունի հանգիստ կըլիւրով. Եւ Գաւառները ուր երկուս միլիոնի չափ Հայ կայ, միայն 60 պատգամաւոր պիտի յուղարկէ. . . :

Արդ մինչեւ որ վերը առաջարկուած ազգային ընդհանրական օրինաւոր խորհրդանոցը զկազմուի Եւ ըստ որոյն Պօլսոյ տեղական երեսփոխանական ժողովին հարկաւ ազգային միաբանութիւն Եւ ազգային ընդհանուր միաբանութիւն չկրնար ըլլալ օրինաւորապէս:

